ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2026 թվականի N 708-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57.1-ին կետի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին «ԳՈՎԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի 2025 թվականի մարտի 27-ի պայմանագիր «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ) հետ 2025 թվականի ապրիլի 13-ին կնքված «Պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքների տրամադրման գործընթացի պարզեցման ավտոմատացված համակարգի խորհրդատվական ծառայությունների մատուցման» N ՀՀ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-2025/1 ծածկագրով գնման պայմանագրում կատարել փոփոխություն՝ պայմանագրով նախատեսված որոշ ծառայություններ փոխարինելով այլ բնութագրեր ունեցող ծառայություններով՝ մինչև պայմանագրի գնի 20 տոկոսի

չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

21.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ